

Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2020-2021 ուստարի)
9-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է Ծովքը վերամիավորվել Մեծ Հայքին. 0,5 մ.
ա/ Ք. ա. 95 թ. բ/ Ք. ա. 94 թ.
գ/ Ք. ա. 92 թ. դ/ Ք. ա. 90 թ.
2. Ո՞վ է տապալել Պարթև Արշակունիների թագավորությունը և սկիզբ դրել Սասանյանների տիրապետությանը Իրանում. 0,5 մ.
ա/ Շապուհ I բ/ Արտավան
գ/ Արտաշիր դ/ Որմիզդ-Արտաշիր
3. Որտե՞ղ է կառուցվել Սամոսատ քաղաքը. 0,5 մ.
ա/ Ծովք բ/ Կոմմագենե
գ/ Փոքր Հայք դ/ Աղձնիք
4. Ո՞վ է ղեկավարել Դարեհ I-ի դեմ Բաբելոնում բարձրացած ապստամբությունը. 0,5 մ.
ա/ Արախս բ/ Խալդիտա
գ/ Վահումիսա դ/ Կյուրոս Կրտսեր
5. Ո՞ր թվականին է Պարոպր Հայկազունին արքայական թագ ստացել. 0,5 մ.
ա/ Ք. ա. 612 թ. բ/ Ք. ա. 605 թ.
գ/ Ք. ա. 590 թ. դ/ Ք. ա. 585 թ.
6. Որքա՞ն է եղել հայոց զորագնդի մարտիկների թիվը Ակոռիի ճակատամարտում. 0,5 մ.
ա/ 300 բ/ 400
գ/ 500 դ/ 600
7. Ո՞ր քաղաքն է Ալեքսանդր Մակեդոնացին դարձրել իր տերության մայրաքաղաքը. 0,5 մ.
ա/ Ալեքսանդրիա բ/ Անտիոք
գ/ Բաբելոն դ/ Աթենք
8. Ե՞րբ է կնքվել Գյուլիստանի հաշտության պայմանագիրը Ռուսաստանի և Իրանի միջև. 0,5 մ.
ա/ 1812 թ. մայիսի 16 բ/ 1813 թ. հոկտեմբերի 12
գ/ 1826 թ. սեպտեմբերի 16 դ/ 1828 թ. փետրվարի 10
9. Ե՞րբ է գործարկվել Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղին. 0,5 մ.
-
10. Ո՞ր քաղաքական լրագիրն է տպագրել Մոսկվայում ստեղծված «Հայրենասերների միություն» կազմակերպությունը. 0,5 մ.
-
11. Ո՞վ է գլխավորել Հայաստանի Հանրապետության՝ 1920 թ. մայիսին ձևավորված կառավարությունը. 0,5 մ.
-
12. Ո՞ր թվականին է Նախիջևանի կառավարումը պաշտոնապես (վերա)հանձնվել Հայաստանի Հանրապետությանը. 0,5 մ.
-
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
ա/ Հայկական Մարդասիրաց ճեմարանի հիմնումը Կալվաթայում
բ/ Գևորգյան ճեմարանի բացումը Էջմիածնում

- գ/ Հակոբ Վարդուկյանի թատերախմբի հիմնումը Կ. Պոլսում
- դ/ Մուրադ-Ռափայելյան վարժարանի ստեղծումը Վենետիկում
- ե/ Սանասարյան վարժարանի հիմնումը Կարինում
- զ/ Ալ. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» պիեսի առաջին բեմադրությունը Երևանում
- է/ Լազարյան ճեմարանի բացումը Մոսկվայում

1	2	3	4	5	6	7

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

- 1. Անիի Մայր տաճար (Կաթողիկե)
 - 2. Վահկա բերդ
 - 3. Զվարթնոցի տաճար
 - 4. Ս. Հռիփսիմեի տաճար
 - 5. Լամբրոն ամրոց
 - 6. Մարաշ քաղաք
- ա. Ներսես Տայեցի կաթողիկոս
 - գ. Կոստանդին I իշխան
 - ե. Կոմիտաս կաթողիկոս
 - բ. Կատրամիդե թագուհի
 - դ. Փիլարտոս Վարաժնունի
 - զ. Օշին իշխան

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա/ 1783 թ. Ռուսաստանի և Վրաստանի միջև Գեորգիևսկում կնքված դաշնագրով Ռուսաստանն իր հովանավորության տակ էր առնում Վրաստանը և զորք տրամադրում նրան:
- բ/ Հայաստանի ազատագրության՝ Հովսեփ Արղությանի և Հովհաննես Լազարյանի կազմած Հյուսիսային ծրագրի համաձայն՝ Հայաստանը պետք է հռչակվեր խորհրդարանական հանրապետություն:
- գ/ Շահամիր Շահամիրյանի կազմած Հարավային ծրագրի համաձայն՝ ազատագրված Հայաստանի թագավորն ընտրվելու էր ռուսաց կայսրի կողմից:
- դ/ 1829 թ. սեպտեմբերի 2-ին կնքված Ադրիանապոլսի պայմանագրով, ինչպես և 1812 թ. կնքված Բուխարեստի հաշտությամբ, Անդրկովկասում Ռուսաստանի գրաված տարածքները վերադարձվել են Թուրքիային:
- ե/ Արևելահայ ազատական ուղղության նշանավոր դեմքերից Ստեփանոս Նազարյանցի խմբագրությամբ Մոսկվայում հրատարակվել է «Հյուսիսափայլ» ամսագիրը:
- զ/ 1860 թ. մայիսին Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատել է արևմտահայերի Ազգային սահմանադրությունը:
- է/ 1877 թ. Բայազետի հայ պաշտպաններից Սիմոն Տեր-Պետրոսյանին հաջողվել է քրդական տարագրվ ծպտված անցնել շրջապատման օղակը և պաշարվածների մասին լուր հասցնել գեներալ Արշակ Տեր-Ղուկասովին:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

- ա/ 1917 թ. մարտին Կովկասի փոխարքայության վերացումից հետո երկրամասում ստեղծվել է իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատը:
- բ/ 1917 թ. աշնանը Թիֆլիսում կայացած Արևելահայերի առաջին համագումարի ավարտից քիչ անց ձևավորվել է գործադիր մարմին՝ Հայոց ազգային կենտրոնական բյուրո:

գ/ Հայրուկ հունգարերեն բառը նշանակում է զոհ, անձնագոհ:

դ/ 1917 թ. հոկտեմբերի 25-ին Պետրոգրադում իրականացված պետական հեղաշրջումից հետո Վ. Լենինի գլխավորությամբ կազմվել է երկրի նոր կառավարություն՝ Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտե:

ե/ 1921 թ. փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո Երևանում ստեղծվել է իշխանության նոր մարմին՝ Հայրենիքի փրկության կոմիտե:

զ/ 1918 թ. ապրիլին Ալեքսանդրապոլում կայացել է հայ ազգային-քաղաքական կազմակերպությունների խորհրդակցություն, որտեղ որոշվեց համախմբել ներուժը թշնամու դեմ պայքարում:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Ք. ա. 612 թ. Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի ուղղությամբ իր զորաբանակով մարա-բաբելոնյան զորքերի արշավանքին մասնակցելու համար Սկայորդու որդի Պարոպրը թագ է ստացել Բաբելոնիայի արքայից:

բ/ Արտաշեսյան արքայատոհմից հետո գահակալած թագավորներից առավել նշանավորը Ջենոնն էր, որի թագավորության տարիները խաղաղ էին, և ժողովուրդը նրան կոչում էր Ջենոն-Արտաշես:

գ/ Արշակ II-ը Բագրևանդ գավառում հիմնել է Արշակավան քաղաքը:

դ/ 484 թ. պարսից արքա Վաղարշի հանձնարարությամբ Հայաստան է եկել Նիխոր զորավարը և Վահան Մամիկոնյանին առաջարկել հաշտության բանակցություններ սկսել:

ե/ Թեոդորոս Ռշտունին 652 թ. հարուստ ընծաներով գնացել է Դամասկոս, բանակցել Մուավիա խալիֆի հետ և կնքել հայ-արաբական պայմանագիր:

զ/ 869 թ. հրավիրվել է հայ իշխանների հատուկ ժողով, որը որոշել է Աշոտ Բագրատունուն հռչակել Հայոց թագավոր:

է/ Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորությունն իր հզորության բարձրակետին է հասել Դավիթ Անհողինի (989-1048 թթ.) գահակալության ժամանակաշրջանում:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ.

Կիլիկիայի մի քանի քաղաքների ու բերդերի կառավարիչ նշանակված Ապլղարիպ Արծրունին Լամբրոն ամրոցն ու շրջակա տարածքները նվիրել է Մեծ Հայքից Կիլիկիա տեղափոխված Հեթում իշխանին, որից էլ սերել է Հեթումյան իշխանական տունը:

Ուղղում. ոչ թե՛ _____ (նշե՛ք սխալը, 0,5 մ.), այլ՝
_____ (նշե՛ք ճիշտը, 0,5 մ.):

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

Հայաստանի ----- -ը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն:

ա. Ո՞ր փաստաթղթից են մեջբերված տողերը:
բ. Հայաստանի ո՞ր պետական մարմինն է ընդունել այն:
գ. Ե՞րբ է ընդունվել այդ պատմական փաստաթուղթը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ո՞ւմ են պատկանում ստորև բերվող խոսքերը. 0,5 մ.
 «Ես ցանկացա, որ հռոմեացիները գնահատվեն ըստ իրենց արդար աշխատանքի պտուղների»:
 ա/ Սերվիոս Տուլիոս բ/ Սկիպիոն Աֆրիկացի
 գ/ Գայոս Գրաքոս դ/ Կատոն Կրտսեր
2. Ո՞վ է «Նոր Ատլանտիդա» աշխատության հեղինակը. 0,5 մ.
 ա/ Անդրեաս Վեզալիոս բ/ Նիկաղայոս Կոպեռնիկոս
 գ/ Գալիեո Գալիլեյ դ/ Ֆրենսիս Բեկոն
3. Ե՞րբ է Լոնդոնում կազմակերպվել տնտեսական նվաճումների առաջին համաշխարհային ցուցահանդեսը. 0,5 մ.
 ա/ 1845 թ. բ/ 1848 թ.
 գ/ 1851 թ. դ/ 1854 թ.
4. Ո՞վ է գլխավորել Գերմանիայի ռեպարացիաների (ոազմատուգանքների) պլանը մշակող փորձագետների խումբը. 0,5 մ.
 ա/ Ֆրանկլին Ռուզվելտ բ/ Չարլզ Դաուես
 գ/ Վուդրո Վիլսոն դ/ Ջոն Բեյնս
5. Ի՞նչ անունով է հայտնի եղել Բալթիկ ծովից մինչև Բյուզանդիայի մայրաքաղաք հասնող առևտրական ճանապարհը. 0,5 մ.

6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

1. Երուսաղեմի գրավումը
2. Խաչակրաց երրորդ արշավանքը
3. Ժակերիա ապստամբությունը
4. Աստվածաշնչի թարգմանությունը անգլերեն

1	2	3	4

- ա. Ֆրիդրիխ I Բարբարոսա բ. Սալահ ադ Դին
 գ. Ջոն Ուիկլիֆ դ. Գիյոմ Կալ

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
 ա/ Վիեննայի վեհաժողովին մասնակցող միապետները 1815 թ. կնքել են «Սրբազան դաշինք»՝ նոր հեղափոխությունների դեմ պայքարելու համար:
 բ/ 1783 թ. Մոնզոլֆիե եղբայրները ստեղծել են առաջին լուսանկարչական սարքը:
 գ/ Առաջին խորհրդարանը (պառլամենտ, ֆրանսերեն՝ խոսելու տեղ) գումարվել է Ֆրանսիայում 1265 թ.:
 դ/ «Ռուսկայա պրավդան» ռուսական առաջին գրավոր օրենսգիրքն է, որ ստեղծվել է իշխան Վլադիմիրի օրոք:
 ե/ 1799 թ. Նապոլեոն Բոնապարտը պետական հեղաշրջում է կատարել. գործադիր իշխանությունը հանձնվել է երեք կոնսուլներին, որոնցից առաջինը Նապոլեոնն էր:
 զ/ Գերմանիան միակողմանի հրաժարվել է Վերսալյան պայմանագրից և 1933 թ. դուրս եկել Ազգերի լիգայից:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
 հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
 պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

08.02.2021 թ.